Հայաստանի Հանրապետության

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Հայաստանի ջրի և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագիր (P508124)

Բազմափուլային ծրագրային մոտեցման 1-ին փուլ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ (ԲՍՀՊ)

Բանակցված տարբերակ

Մայիսի 8, 2025

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

1. Վարկային Համաձայնագրի («Համաձայնագիր») համաձայն ՀՀ կառավարության («Վարկառու») կողմից իրականացվելու է «Հայաստանի Ջրի և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագիր» բազմափուլ ծրագրային մոտեցման 1-ին փուլի ծրագիրը («Ծրագիր»)՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) և վերջինիս Ջրային կոմիտեի (ՋԿ) ներգրավմամբ: Ինչպես սահմանված է Համաձայնագրում՝ Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը («Բանկը») համաձայնություն է հայտնել ապահովել Ծրագրի ֆինանսավորումը:

2. Վարկառուն պետք է ապահովի, որ Ծրագիրն իրականացվի ինչպես Բնապահպանական և սոցիալական ստանդարտների (ԲՍՍ) այնպես էլ սույն Բնապահպանական և սոցիալական հանձնառությունների պլանի (ԲՍՀՊ) Բանկի պահանջներին համապատասխան: ԲՍՀՊ-ն կազմում է համաձայնագրի մաս: Եթե սույն փաստաթղթում այլ բան սահմանված չէ, Համաձայնագրում հապավումների համար առկա են իրենց սահմանումները:

3. Սույն ԲՍՀՊ-ով սահմանվում են նյութական միջոցները և գործողությունները, որոնք կամ իրականացվելու են Վարկառուի կողմից կամ Վարկառուն նպաստելու է դրանց իրականացմանը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում, սահմանելու է դրանց համապատասխան ժամկետները, ինչպիսիք են ինստիտուցիոնալ, կադրային, ուսուցման, մշտադիտարկման և հաշվետվությունների կազմակերպումն ու բողոքների կառավարումը: ԲՍՀՊ-ն նաև սահմանում է բնապահպանական և սոցիալական (ԲԵՍ) փաստաթղթերը, որոնք պետք է պատրաստվեն կամ թարմացվեն, ներկայացվեն խորհրդատվությունների ընթացքում, հրապարակվեն և իրականացվեն Ծրագրի շրջանակներում Բանկի համար ընդունելի ձևով՝ ԲՍՍ-ներին համահունչ: Նշված ԲԵՍ փաստաթղթերը կարող են ժամանակ առ ժամանակ վերանայվել Բանկի կողմից՝ նախնական գրավոր համաձայնությամբ: Ինչպես նախատեսված է նշված Համաձայնագրով, Վարկառուն պետք է ապահովի բավարար միջոցների առկայությունը՝ ԲՍՀՊ-ի իրականացման ծախսերը հոգալու համար:

4. Ըստ Բանկի և Վարկառուի միջև պայմանավորվածության, սույն ԲՍՀՊ-ն ժամանակ առ ժամանակ ըստ անհրաժեշտության կվերանայվի, որպեսզի ներառվեն և արտացոլվեն Ծրագրում իրականացված կամ չնախատեսված հանգամանքներով պայմանավորված փոփոխություններն՝ ըստ Ծրագրի պահանջների: Այս պարագայում Բանկը և Վարկառուն ըստ պայմանավորվածության թարմացնում են ԲՍՀՊ-ն, որպեսզի այս փոփոխությունները արտացոլվեն, Բանկի և Ծրագիրն իրականացնող թիմի (ԾԻԹ) ղեկավարի միջև գրավոր հաստատված նամակագրությամբ: Թարմացված ԲՍՀՊ-ն պետք է սեղմ ժամկետում հրապարկվի Վարկառուի կողմից:

5. Ստորև բերված «Իրականացման պատրաստվածության ցուցիչներ» ենթաբաժինը սահմանում է այն գործողություններն ու միջոցառումները, որոնք պետք է մշտադիտարկվեն՝ գնահատելու Ծրագրի պատրաստվածությունը սույն ԲՍՀՊ-ին համապատասխան իրականացումը մեկնարկելու համար: Այնուամենայնիվ, սույն ԲՍՀՊ-ի բոլոր գործողություններն ու միջոցառումները պետք է իրականացվեն այնպես, ինչպես նշված է ստորև նշված «Ժամանակացույց» սյունակում՝ անկախ նշված ենթաբաժնում դրանց առկայությունից:

Նյութական միջոցներ և գործողություններ		Ժամանակացույց	Պատասխանատու մարմին
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒՄ			
Ա	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ ա) Ջրային կոմիտեի կազմում ստեղծել ԾԻԹ, որը կապահովի ԲեՍ կառավարում՝ ներառյալ ենթածրագրերի մակարդակով ԲեՍ գնահատումը և գործիքակազմի պատրաստումը, վերահսկողությունը, կարողությունների զարգացումը և հաշվետվությունների ներկայացումը: Թիմը պետք է բաղկացած լինի համապատասխան որակավորում ունեցող անձնակազմով և ռեսուրսներով՝ աջակցելու ծրագրի բնապահպանական, սոցիալական, առողջության և անվտանգության (ԲՍԱԱ) ռիսկերի և ազդեցությունների կառավարմանը: Թիմի կազմում պետք է ներգրավված լինեն առնվազն մեկ բնապահպանության մասնագետ, մեկ սոցիալական հարցերի մասնագետ, մեկ գենդերային և համայնքի իրազեկման մասնագետ և մեկ աշխատանքի և առողջության անվտանգության (ԱԱԱ) մասնագետ: բ) Համագործակցել համապատասխան պետական մարմինների հետ ինչպես ազգային, այնպես էլ մարզային մակարդակներում, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների հետ՝ ներառյալ Ջրօգտագործողների ընկերությունները (ՋՕԸ), մասնավոր հատվածը, ակադեմիական հաստատությունները, թիրախային տարածքների համայնքների ներկայացուցիչները՝ Ծրագրի ԲեՍ ռիսկերը և ազդեցությունները կառավարելու համար:	Ա. Ստեղծել ԾԻԹ և վարձել ԲեՍ և գենդերային ու համայնքի իրազեկման մասնագետներ՝ Ծրագրի էֆեկտիվության օրվանից հետո 45 օրվա ընթացքում: Վարձել ԱԱԱ մասնագետ նախքան շինարարական աշխատանքների մեկնարկը: Բ. Մինչև ծրագրի գործողությունների մեկնարկը, որտեղ նախատեսվում են էական ԲեՍ ազդեցություններ:	ԾԻԹ
Բ	ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ Պատրաստել, ընդունել և իրականացնել ներուժի զարգացման ծրագիրը (ՆԶԾ) որպես Բնապահպանական, սոցիալական կառավարման շրջանակի (ԲՍԿՇ) և Ծրագրի գործառնական ձեռնարկի (ԾԳՁ) մաս, ներառելով բայց չսահմանափակելով՝ • վերապատրաստումներ ԾԻԹ-ի աշխատակիցների, համապատասխան պետական շահագրգիռ մարմինների, ՋՕԸ-ների, կապալառուների և վերահսկող ճարտարագետների համար Ծրագրի հիմնական ԲեՍ ասպեկտների վերաբերյալ: Այն կընդգրկի ծրագրի և ենթածրագրի մակարդակով իրականացվող գործողությունների Շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատումները (ՇՄՍԱԳ), Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանները (ԲՍԿՊ), Աշխատանքի և առողջության անվտանգությունը (ԱԱԱ), Համայնքի առողջությունն ու անվտանգությունը (ՀԱԱ), արտակարգ	Ընդունել ոչ ուշ, քան էֆեկտիվության օրվանից հետո 3 (երեք) ամիսը և դրանից հետո պահպանել Ծրագրի իրականացման ընթացքում:	ԾԻԹ

Նյութական միջոցներ և գործողություններ		Ժամանակացույց	Պատասխանատու մարմին
	իրավիճակներին պատրաստվածության ու արձագանքման մեխանիզմը, շահակիրների ներգրավումը, սեռական շահագործման և բռնության (ՍՇԲ) և սեռական ոտնձգությունների (ՍՈ) կանխարգելումն ու կառավարումը և բողոքների կառավարումը: • Համայնքի ներգրավման հանդիպումներ և իրազեկման ծրագրեր Ծրագրի համապատասխան ԲևՍ ասպեկտների վերաբերյալ՝ Ծրագրի ավելի անվտանգ իրականացումը խթանելու և ազդակիր համայնքներին իրենց իրավունքներն ու աջակցության գործող համակարգերը ներկայացնելու համար:		
ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ			
Գ	ԿԱՆՈՆԱՎՈՐ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Պատրաստել և կանոնավոր կերպով Բանկին ներկայացնել մշտադիտարկման հաշվետվություններ՝ ծրագրի Բնապահպանական, սոցիալական, առողջության և անվտանգության կատարողականի վերաբերյալ: Հաշվետվությունները պետք է ներառեն. • Ըստ ԲՍԿՇ-ի, Տարաբնակեցման շրջանակի (ՏՇ) և ԲՍՀՊ-ի ԲևՍ փաստաթղթերի պատրաստման և իրականացման կարգավիճակը: • Շահակիրների ներգրավման գործունեության ամփոփագիրն՝ ըստ Շահակիրների Ներգրավման Պլանի (ՇՆՊ)՝ այդ թվում Ծրագրի և ենթածրագրի մակարդակներում: • Բողոքների լուծման և արձագանքման մեխանիզմով (ԲԼԱՄ) ստացված բողոքների գրանցամատյանը, և բողոքների լուծման գործընթացում ձեռք բերված առաջընթացը: • Կապալառուների և ենթակապալառուների ԲևՍ կատարողականը, որն ամփոփված է կապալառուների և տեխնիկական հսկողության ընկերությունների ամսական հաշվետվություններում: • Ստորև բերված «Ե» ենթակետի գործողությունների շրջանակներում հաղորդված միջադեպերի և պատահարների, ինչպես նաև Համաշխարհային բանկի կողմից սահմանված անհամապատասխանության դեպքերի թվի և դրանց լուծման կարգավիճակը: • Ներուժի զարգացման գործունեության կարգավիճակը վերոնշյալ «Բ» ենթակետի գործողությունների շրջանակներում:	Բանկին ներկայացնել եռամսյակային մշտադիտարկման հաշվետվություններ էֆեկտիվության օրվանից սկսած, հաշվետու ժամանակահատվածին հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում: ԲևՍ կատարողականի կարգավիճակը պետք է ամփոփվի և ներառվի Ծրագրի առաջընթացի կիսամյակային հաշվետվություններում: Յուրաքանչյուր կիսամյակային հաշվետվություն պետք է ներկայացվի Բանկին յուրաքանչյուր հաշվետու ժամանակահատվածին հաջորդող 45 աշխատանքային օրվա ընթացքում:	ԾԻԹ

Նյութական միջոցներ և գործողություններ		Ժամանակացույց	Պատասխանատու մարմին
Դ	ԿԱՊԱԼԱՌՈՒՆԵՐԻ ԱՄՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ Պահանջել կապալառուներից և տեխհսկողության ընկերություններից ներկայացնել ամսական ԲԵՍ կատարողականի մշտադիտարկման հաշվետվություններ՝ մրցութային փաստաթղթերում և պայմանագրերում նախատեսված չափանիշներին համապատասխան, և փոխանցել այդ հաշվետվությունները Բանկին:	Ներկայացնել ամսական հաշվետվությունները Բանկին՝ ըստ պահանջի, ինչպես նաև որպես հաշվետվություններին կից հավելվածներ՝ «Գ» ենթակետի գործողությունների շրջանակը:	ԾԻԹ
Ե	ՄԻՋԱԴԵՊԵՐ և ՊԱՏԱՀԱՐՆԵՐ Ա. Տեղեկացնել Բանկին Ծրագրին առնչվող ցանկացած միջադեպի կամ պատահարի մասին, որը կարող է կամ հավանական է, որ ունենա էական բացասական ազդեցություն շրջակա միջավայրի, ազդակիր համայնքների, հանրության կամ աշխատողների վրա, ինչպես նաև աշխատողների կամ հանրության մահվան կամ լուրջ վնասվածքների հետևանքով առաջացած դեպքերը, բռնության, խտրականության կամ բողոքի ակտերը, մշակութային ժառանգության կամ կենսաբազմազանության ռեսուրսների վրա անսպասելի ազդեցությունները, շրջակա միջավայրի աղտոտումը, պատվարի խափանումը, հարկադրական կամ մանկական աշխատանքը, առանց պատշաճ իրավական ընթացակարգի տեղահանումը (հարկադիր վտարում), սեռական շահագործման կամ բռնության (ՍՇԲ) կամ սեռական ոտնձգության (ՍՈ) մեղադրանքները կամ հիվանդությունների բռնկումները: Բանկի պահանջով ներկայացնել մանրամասներ՝ միջադեպի կամ պատահարի վերաբերյալ: Բ. Կազմակերպել միջադեպի կամ պատահարի համապատասխան ուսումնասիրություն՝ դրա անմիջական, խորքային և հիմնական պատճառները պարզելու համար: Պատրաստել և համաձայնեցնել Բանկի հետ ուղղիչ գործողությունների պլան (ՈՒԳՊ), որտեղ կներկայացվեն այն միջոցառումները և գործողությունները, որոնք պետք է ձեռնարկվեն միջադեպը կամ պատահարը լուծելու համար ինչպես նաև կանխելու դրա կրկնությունը:	Ա. Տեղեկացնել Բանկին միջադեպի կամ պատահարի մասին 48 ժամվա ընթացքում: Բանկի պահանջի համաձայն տրամադրել առկա մանրամասները: Բ. Միջադեպի կամ պատահարի վերաբերյալ ուսումնասիրության հաշվետվությունը և ՈՒԳՊ-ն ներկայացնել Բանկին՝ նախնական ծանուցումը ներկայացնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Բանկի կողմից այլ ժամկետներ գրավոր կերպով չեն համաձայնեցվել:	ԾԻԹ
ԲՍՍ 1: ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ՈՒ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ			
1.1	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՊԼԱՆՆԵՐ		

Նյութական միջոցներ և գործողություններ		Ժամանակացույց	Պատասխանատու մարմին
	1. Ավարտել, վերահանրայնացնել և իրականացնել Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակը (ԲՍԿՇ)՝ ուղղորդելու ԲԿՍ ռիսկերի և ազդեցությունների ընդհանուր կառավարումը, ենթածրագրերի մակարդակով գործունեության գնահատումների պատրաստումը և կառավարման պլանների մշակումն ու իրականացումը: Թարմացնել ԲՍԿՇ-ն ըստ անհրաժեշտության՝ արտացոլելու Ծրագրի ռիսկերի, ազդեցությունների և գործունեության փոփոխությունները ծրագրի իրականացման ընթացքում: 2. Մշակել, ավարտել և իրականացնել տեղանքին բնորոշ ՇՄՍԱԳ-ներ և համապատասխան ԲՍԿՊ-ներ կամ կիրառել Բնապահպանական և սոցիալական գործելակերպի կանոնակարգեր (ԲՍԳԿ) Ծրագրի Բաղադրիչ 2 և 3-ի շրջանակներում ցածր ռիսկայնությամբ շինարարական աշխատանքների համար՝ համապատասխան ԲՍՍ-ներին համահունչ: 3. Պահանջել կապալառուներից և ենթակապալառուներից մշակել Կապալառուի բնապահպանական և սոցիալական կառավարման պլաններ (Կ-ԲՍԿՊ), որոնք համահունչ են աշխատանքների համար նախատեսված համապատասխան ԲՍԿՊ-ներին: Ապահովել, որ վերահսկող ճարտարագետները վերանայեն, հաստատեն և հետևեն այդ պլանների պահանջներին համապատասխանությանը՝ որպես պայմանագրի կառավարման մաս: 4. Մշակել Առաջադրանքի պայմաններ (ԱՊ) Ռազմավարական էկոլոգիական և սոցիալական գնահատման (ՌԷՍԳ) համար՝ ապահովելով համապատասխանությունը ոռոգման բնագավառում կարգավորիչ բարեփոխումների և ազգային ռազմավարության մշակման շրջանակին, և պատրաստել գնահատումը՝ ուղղորդելու քաղաքական բարեփոխումների և ազգային ջրային, ազգային ոռոգման և գյուղական ջրամատակարարման և ջրահեռացման ռազմավարությունների մշակման հետ կապված ստորին հոսանքի ԲԿՍ ռիսկերի և ազդեցությունների կառավարումը:	1. Էֆեկտիվության օրվանից հետո 3 (երեք) ամսվա ընթացքում և այնուհետև ծրագրի իրականացման ողջ ընթացքում: 2. Տեղանքին բնորոշ ՇՄՍԱԳ-ների և ԲՍԿՊ-ների մշակում մանրամասն նախագծման փուլում, որոնք պետք է ավարտին հասցվեն ոչ ուշ քան Բաղադրիչ 2 և 3-ի շրջանակներում գնումների գործընթացի մեկնարկը: 3. Ավարտին հասցնել մշակումը նախքան Մաս 2-ի և 3-ի շրջանակներում շինարարական աշխատանքների մեկնարկը և իրականացնել մշտադիտարկում համապատասխան աշխատանքների իրականացման ողջ ընթացքում: 4. ԱՊ-ները մշակել մինչև կարգավորիչ բարեփոխումների և ռազմավարության մշակման մեկնարկը: ՌԷՍԳ-ը մեկնարկել Բաղադրիչ 1-ի շրջանակներում իրականացվող Տեխնիկական աջակցության (ՏԱ) իրականացմանը զուգահեռ:	ԾԻԹ
1.2	ԿԱՊԱԼԱՌՈՒՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ		

Նյութական միջոցներ և գործողություններ		Ժամանակացույց	Պատասխանատու մարմին
	Համալրել ԲՍՀՊ-ի համապատասխան մասերը, ներառելով նաև համապատասխան ԲԿՍ գնահատումները կամ պլանները, աշխատանքի կառավարման ընթացակարգերը (ԱԿԸ) և վարքագծի կանոնները, գնումների փաստաթղթերի և կապալառուների և վերահսկող ընկերությունների հետ պայմանագրերի ԲԿՍ բնութագրերում: Հավաստիանալ, որ կապալառուները և վերահսկող ընկերությունները իրականացնում են պահանջները, և որ նրանք իրենց ենթակապալառուներից պահանջում են համապատասխանել իրենց պայմանագրերի ԲԿՍ բնութագրերին: Բանկին տրամադրել կապալառուների/ենթակապալառուների և վերահսկող ընկերությունների հետ կնքված համապատասխան պայմանագրերի պատճենները:	Գնումների փաստաթղթերի և համապատասխան պայմանագրերի պատրաստման շրջանակներում: Վերահսկել կապալառուներին Ծրագրի իրականացման ողջ ընթացքում: Համապատասխան պայմանագրերի պատճենները ներկայացնել Բանկ՝ ըստ պահանջի:	ԾԻԹ
1.3	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ Իրականացնել խորհրդատվություններ, ուսումնասիրություններ, ներառյալ տեխնիկատնտեսական հիմնավորումները, մանրամասն նախագծի մշակումը (Փուլ 2-ի համար), ներուժի զարգացումը, վերապատրաստումը և ցանկացած այլ տեխնիկական աջակցության գործողություններ Ծրագրի շրջանակներում, ի թիվս այլոց՝ քաղաքականության բարեփոխումները և ռազմավարության մշակումը, ինչպես նաև շահագրգիռ կողմերի վերապատրաստման միջոցառումները՝ համաձայն բանկի համար ընդունելի հանձնարարականների, որոնք համահունչ են ԲՍՍ-ների պահանջներին: Այնուհետև պատրաստել և ամփոփել այդ գործունեությունների արդյունքները համաձայն հանձնարարականների:	Ծրագրի իրականացման ողջ ընթացքում	ԾԻԹ
1.4	ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ Նույնականացնել Ծրագրի հարակից հաստատությունները և Բանկի հետ խորհրդատվության միջոցով և Բանկի համար ընդունելի ձևով կիրառել ստորև թվարկված գործողությունները: Եթե Ծրագրի իրականացման ընթացքում հայտնաբերվեն հարակից հաստատություններ, ապա ապահովել, որ այդ հաստատությունների սեփականատերը և/կամ շահագործողը իրականացնեն համապատասխան գործողությունները սույն ԲՍՀՊ-ի և ԲՍՍ-ների կիրառելի պահանջներին համապատասխան, ներառյալ ԲՍԿՇ, ԲՍԿՊ, ԱԿԸ-ը, ՏՇ և ՇՆՊ:	Ծրագրի իրականացման ողջ ընթացքում: Շտապ իրազեկել Բանկին հավանական հարակից հաստատության վերաբերյալ:	ԾԻԹ
ԲՍՍ 2: ԱՇԽԱՏԱՆՔ և ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ			

Նյութական միջոցներ և գործողություններ		Ժամանակացույց	Պատասխանատու մարմին
2.1	ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ Ավարտել, հանրայնացնել և իրականացնել Ծրագրի Աշխատանքի կառավարման ընթացակարգերը (ԱԿԸ)՝ ապահովելով, որ ԱԿԸ-ի համապատասխան պահանջները ներառվեն ԾԻԹ-ի և շինարարական կապալառուների և ենթակապալառուների կողմից ներգրավված աշխատողների հետ կնքված պայմանագրերի դրույթներում: Թարմացնել ԱԿԸ-ն ըստ անհրաժեշտության՝ արտացոլելու ռիսկերի պրոֆիլների և/կամ ծառայությունների շրջանակի փոփոխությունները՝ համաձայն ԲՍՍ2-ի:	էֆեկտիվության օրվանից հետո 3 (երեք) ամսվա ընթացքում և այնուհետև ծրագրի իրականացման ողջ ընթացքում:	ԾԻԹ
2.2	ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ Պահանջել կապալառուներից և ենթակապալառուներից իրականացնել առողջության և անվտանգության կառավարման միջոցառումներ՝ որպես տեղանքին բնորոշ ԲՍԿՊ-ի մաս՝ գնահատելու և կառավարելու ենթածրագրի ԱԱԱ ռիսկերն ու ազդեցությունները համաձայն Ծրագրի Աշխատանքի կառավարման ընթացակարգի և դիտարկվող տեղանքին բնորոշ ԲՍԿՊ-ի:	Ներառել այս պահանջը մրցութային փաստաթղթերում նախքան մրցութային գործընթացի մեկնարկը: Վերանայել և հաստատել ԱԱԱ-ի կառավարման պլանը Կ-ԲՍԿՊ-ներում մինչև շինարարական աշխատանքների և ԱԱԱ-ի ռիսկեր պարունակող գործունեության մեկնարկը, այնուհետև իրականացնել պայմանագրի իրականացման ողջ ընթացքում:	ԾԻԹ
2.3	ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԵԽԱՆԻԶՄ ԾՐԱԳՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ Ստեղծել և կիրառել բողոքների մեխանիզմ Ծրագրի աշխատողների համար, ինչպես նկարագրված է ԱԿԸ-ում և համահունչ է ԲՍՍ 2-ին:	Ստեղծել Բողոքների մեխանիզմ՝ նախքան Ծրագրում աշխատողներին ներգրավելը, և այնուհետև պահպանել ու կիրառել այն Ծրագրի իրականացման ողջ ընթացքում:	ԾԻԹ
ԲՍՍ 3: ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ և ԱՂՏՈՏՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ			
3.1	ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ		

Նյութական միջոցներ և գործողություններ		Ժամանակացույց	Պատասխանատու մարմին
	Նախապատրաստել և իրականացնել Թափոնների կառավարման պլան (ԹԿՊ), որպես Ծրագրի համար մշակված Տեղանքին բնորոշ ԲՍԿՊ-ի և Կապալառուի ԲՍԿՊ-ի մաս՝ կառավարելու վտանգավոր և ոչ վտանգավոր թափոնները ԲՍՍ3-ի համաձայն:	Նույն ժամանակահատվածը, ինչը նշված է 1.1.2 կետում՝ համապատասխան ԲևՍ գործիքի նախապատրաստման և իրականացման համար:	ԾԻԹ
3.2	ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ և ԱՂՏՈՏՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ Ներառել ռեսուրսների արդյունավետության և աղտոտման կանխարգելման ու կառավարման միջոցառումները որպես Տեղանքին բնորոշ ԲՍԿՊ-ի և Կապալառուի ԲՍԿՊ-ի մաս, որը պետք է պատրաստվի վերը նշված 1.1.2 կետին համապատասխան:	Նույն ժամանակահատվածը, ինչը նշված է 1.1.2 կետում՝ համապատասխան ԲևՍ գործիքի նախապատրաստման և իրականացման համար:	ԾԻԹ
ԲՍՍ 4: ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ			
4.1	ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ և ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ Ներառել երթևեկության և ճանապարհային անվտանգության հետ կապված ռիսկերը կառավարելու միջոցներ, ներառյալ ծրագրի համար մատակարարվող ապրանքների, նյութերի և աշխատողների փոխադրումից բխող ռիսկերը, ինչպես պահանջվում է ըստ ԲՍԿՇ-ի և տեղանքին բնորոշ ԲՍԿՊ-ի:	Նույն ժամանակահատվածը, ինչը նշված է 1.1.2 կետում՝ համապատասխան ԲևՍ գործիքի նախապատրաստման և իրականացման համար:	ԾԻԹ
4.2	ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ և ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ Գնահատել և կառավարել Ծրագրի գործողություններից բխող հատուկ ռիսկերը և համայնքի վրա ազդեցությունները, ներառյալ, բայց չսահմանափակվելով, երթևեկության կառավարում, Ծրագրի աշխատողների վարքագիծ, արտակարգ իրավիճակների արձագանքում և մեղմացման միջոցառումների ներառում տեղանքին բնորոշ ԲՍԿՊ-ում և Կապալառուի ԲՍԿՊ-ում, որը պետք է պատրաստվի ԲՍԿՇ-ի համաձայն:	Նույն ժամանակահատվածը, ինչը նշված է 1.1.2 կետում՝ համապատասխան ԲևՍ գործիքի նախապատրաստման և իրականացման համար:	ԾԻԹ

Նյութական միջոցներ և գործողություններ		Ժամանակացույց	Պատասխանատու մարմին
4.3	ՍԵՌԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ և ԲՌՆՈՒԹՅԱՆ / ՍԵՌԱԿԱՆ ՈՏՆՁԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԻՍԿԵՐ Նախապատրաստել և իրականացնել ՍՇԲ և ՍՈ կանխարգելիչ գործողություններ որպես տեղանքին բնորոշ ԲՍԿՊ-ի և Կապալառուի ԲՍԿՊ-ի մաս՝ ԲՍԿՇ-ի համաձայն համապատասխան պայմանագրերի համար։ Պլանը, որը կարող է ներառել վարքագծի կանոնակարգի իրականացում, իրազեկության բարձրացում և արշավներ, և ՍՇԲ/ՍՈ-ի նկատմամբ զգայուն ԲԼՄ, պետք է համաչափ լինի Ծրագրի գործողություններին առնչվող ՍՇԲ/ՍՈ ռիսկերին։	Նույն ժամանակահատվածը, ինչը նշված է 1.1.2 կետում՝ համապատասխան ԲևՍ գործիքի նախապատրաստման և իրականացման համար։	ԾԻԹ
4.4	ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ Գնահատել և իրականացնել միջոցառումներ՝ Ծրագրի անվտանգության ռիսկերը կառավարելու համար, այդ թվում՝ անվտանգության անձնակազմի (թիկնապահների) ներգրավման ռիսկերը՝ Ծրագրի աշխատողների, տարածքների, ռեսուրսների և գործունեության պահպանման համար՝ որպես ԲՍԿՇ-ի և տեղանքին բնորոշ ԲՍԿՊ-ի մաս, ըստ անհրաժեշտության։	Նույն ժամանակահատվածը, ինչը նշված է 1.1.2 կետում՝ համապատասխան ԲՍ գործիքի նախապատրաստման և իրականացման համար։	ԾԻԹ
4.5	ՊԱՏՎԱՐՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ Դիտարկել Բաղադրիչ 3-ի շրջանակներում ֆինանսավորվող յուրաքանչյուր ջրամբարի սխեման և ներկայացնել պատվարների անվտանգության վերաբերյալ կիրառելի պահանջները՝ համաձայն ԲՍՍ4-ի։ Այս պահանջները պետք է ներառվեն տեխնիկատնտեսական հիմնավորումների ԱՊ-ներում, մանրամասն նախագծերում, տեղանքին բնորոշ ՇՄՍԱԳ-ում և ԲՍԿՊ-ներում։	Ռոգման սխեմաների ընտրությունից առաջ պատվարների անվտանգության միջոցառումները պետք է ներառվեն ջրամբարների նախագծերում և համապատասխան ԲՍԿՊ-ներում նախքան շինարարության մեկնարկը։	ԾԻԹ
ԲՍՍ 5: ՀՈՂԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ, ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ ԵՎ ՀԱՐԿԱԴԻՐ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՈՒՄ			

Նյութական միջոցներ և գործողություններ		Ժամանակացույց	Պատասխանատու մարմին
5.1	ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿ 1. Ավարտել, հանրայնացնել և իրականացնել Ծրագրի Տարաբնակեցման շրջանակը (ՏՇ), որը համապատասխանում է ԲՍՍ5-ին: 2. Պատրաստել և իրականացնել Տարաբնակեցման պլան (ՏՊ) ապահովելու Բաղադրիչ 2 և 3-ի շինարարական աշխատանքների համար հողերի ձեռքբերման հետ կապված կենսապայմանների բարելավումն, ինչպես սահմանված է Տարաբնակեցման շրջանակում և համահունչ է ԲՍՍ5-ին:	1. Ավարտել և հանրայնացնել ՏՇ-ը Ծրագրի էֆեկտիվության օրվանից հետո 3 (երեք) ամսվա ընթացքում, որից հետո կիրառել ՏՇ-ը Ծրագրի իրականացման ողջ ընթացքում: 2. Նախքան նախատեսվող աշխատանքների մեկնարկը իրականացնել համապատասխան տարաբնակեցման պլան, երաշխավորելով, որ ամբողջական փոխհատուցում է տրամադրվում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նախքան հողի ձեռքբերումը և գույքի տիրապետումը տեղահանված անձինք կվերաբնակեցվեն և կտրամադրվեն վերաբնակեցման նպաստներ:	ԾԻԹ
ԲՍՍ 6: ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ և ԿԵՆԴԱՆԻ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ			
6.1	ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐ և ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ Գնահատել և կառավարել կենսաբազմազանության հետ կապված ռիսկերն ու ազդեցությունները՝ որպես ԲՍԿՇ-ի և տեղանքին բնորոշ ԲՍԿՊ-ի մաս, ներառյալ Կենսաբազմազանության կառավարման պլանի (ԿԿՊ) պատրաստումը, որտեղ բացահայտված են կենսաբազմազանության համար էական ռիսկերը և բացասական ազդեցությունները՝ ԲՍՍ6-ին համահունչ:	Նույն ժամանակահատվածը ինչ նշված է 1.1.2-ում համապապատասխան ԲԿՍ գործիքների նախապատաստման և իրականացման համար:	ԾԻԹ
ԲՍՍ 7: ՀՆԷԱԲՆԱԿ ԺՈՂՈՎՈՒՐԴ/ ԵՆԹԱՍԱՀԱՐԱՅԻՆ ԱՖՐԻԿԱՅԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆԱՊԱՀՈՎ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ			
7.1	Այս ստանդարտը Ծրագրին չի վերաբերում		
ԲՍՍ 8: ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ			
8.1	ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ և ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ		

Նյութական միջոցներ և գործողություններ		Ժամանակացույց	Պատասխանատու մարմին
	Բաղադրիչ 2-ի և 3-ի շրջանակներում, եթե հայտնաբերվի, որ որևէ ոռոգման կամ ՋՋ սխեմաներ ներառում են մշակութային, պատմական, գեղարվեստական կամ հնագիտական նշանակություն ունեցող ֆիզիկական օբյեկտներ, վայրեր կամ կառույցներ, ապա պետք է մշակել, ընդունել և իրականացնել Մշակութային ժառանգության կառավարման պլան (ՄԺԿՊ)՝ որպես տեղանքին բնորոշ ԲՍԿՊ-ի մաս: Այս ամենը պետք է իրականացնել Ծրագրի համար մշակված ԲՍԿՇ-ի ուղեցույցներին և ԲՍՍ8-ին համապատասխան:	Նույն ժամանակահատվածը ինչ նշված է 1.1.2-ում համապատասխան ԲևՍ գործիքների ընդունման և իրականացման համար:	ԾԻԹ
8.2	ՊԱՏԱՀԱԿԱՆ ԳՏԱԾՈՆԵՐ Նկարագրել և կիրառել պատահական գտածոների ընթացակարգերը որպես տեղանքին բնորոշ ԲՍԿՊ-ի մաս՝ Ծրագրի շրջանակներում պատրաստված ԲՍԿՇ-ի ուղեցույցներին համապատասխան:	Նույն ժամանակահատվածը ինչ նշված է 1.1.2-ում համապատասխան ԲևՍ գործիքների ընդունման և իրականացման համար:	ԾԻԹ
ԲՍՍ 9: ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՆՈՐԴՆԵՐ (Սույն ստանդարտը կիրառելի է միայն Ֆինանսական միջնորդների (ՖՄ) ներգրավված ծրագրերի համար)			
9.1	Այս ստանդարտը Ծրագրին չի վերաբերում		
ԲՍՍ 10: ՇԱՀԱԿԻՐՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ և ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅՆԱՑՈՒՄ			
10.1	ՇԱՀԱԿԻՐՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՊԼԱՆ Ծրագրի համար ավարտել, հանրայնացնել և իրականացնել Շահակիրների ներգրավման պլան (ՇՆՊ), համահունչ ԲՍՍ10-ին, ապահովել, որ շահակիր կողմերին ժամանակին տրամադրվի համապատասխան, հասկանալի և մատչելի տեղեկատվություն՝ ըստ հավուր պատշաճի նրանց հետ խորհրդակցելով, զերծ լինելով շահարկումից, միջամտությունից, հարկադրանքից, խտրականությունից և ահաբեկումից: Թարմացնել ՇՆՊ-ն, ըստ անհրաժեշտության՝ արտացոլելու տեղում իրականացվող աշխատանքները, առաջացող ռիսկերը և աշխատանքների ծավալի ցանկացած փոփոխություն:	Ծրագրի էֆեկտիվության օրից հետո 1 (մեկ) ամսվա ընթացքում, այնուհետև կիրառել այն Ծրագրի իրականացման ողջ ընթացքում:	ԾԻԹ
10.2	ԾՐԱԳՐԻ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ և ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ		ԾԻԹ

Նյութական միջոցներ և գործողություններ		Ժամանակացույց	Պատասխանատու մարմին
	Ձևավորել, հանրայնացնել, պահպանել և կիրառել հասանելի բողոքների մեխանիզմ՝ Ծրագրի հետ կապված խնդիրների և բողոքների լուծումը ստանալու և հեշտացնելու համար՝ արագ, արդյունավետ և թափանցիկ ձևով, որը հասանելի է մշակութային առումով համապատասխան և հասանելի է Ծրագրի ազդակիր կողմերին՝ անվճար և առանց փոխհատուցման, ներառյալ խնդիրները և բողոքները, որոնք ԲՍՍ10-ին համահունչ ներկայացված են անանուն կերպով: Բողոքների մեխանիզմը պետք է կարգավորված լինի ՍՇԲ և ՍՈ՝ բողոքների լուծման, գրանցման և հեշտացման համար, այդ թվում՝ տուժածներին դեպի գենդերային բռնության ենթարկվածների համապատասխան ծառայություններ ուղղորդելու միջոցով՝ պահպանելով գաղտնիությունը:	Ծրագրի էֆեկտիվության օրից հետո 1 (մեկ) ամսվա ընթացքում, այնուհետև կիրառել այն Ծրագրի իրականացման ողջ ընթացքում:	

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐ

Հետևյալ գործողությունները իրականացման պատրաստականության ցուցիչներն են

1. ԲևՍ թիմը ստեղծվել է և համալրվել որակավորված մասնագետներով՝ համաձայն Մաս Ա-ի:
2. Ծրագրի ԲևՍ գործիքները, որոնք ընդգրկում են ԲՍԿՇ, ՏՇ, ԱԿԸ և ՇՆՊ-ը, վերջնականացվել և ընդունվել են՝ համաձայն ԲՍՍ1-ի Գործողություն 1.1.1-ի, ԲՍՍ2-ի Գործողություն 2.1-ի, ԲՍՍ5-ի Գործողություն 5.1-ի և ԲՍՍ10-ի Գործողություն 10.1-ի:
3. Ծրագրի մակարդակով ԲԷՄ-ն ստեղծվել է՝ ԲՍՍ10-ի Գործողություն 10.2-ի համաձայն: